ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30 » հունիս 2021թ. N 87 Ա

ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի թիվ 786-Ն որոշումը և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2021 թվականի հունիսի 9-ի թիվ 74-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կազմած եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի թիվ 786-Ն որոշմամբ ՀՀ Վայոց ձորի մարզին տրամադրվող «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին» հոդվածից, ըստ հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատանքային խմբի կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա մարզում առաջնահերթ հիմնախնդիրները բացահայտելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից ներկայացված հիմնավորումների, 3 000 000 (երեք միլիոն) ՀՀ դրամ հատկացնել «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Գետափի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ին՝ սանհանգույցների և կոյուղու ներքին ցանցի հիմնանորոգման նպատակով:

2. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ կազմակերպել ընթացիկ դրամաշնորհի պայմանագիր կնքելու աշխատանքները:

3. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը, ըստ կնքված պայմանագրերի, ապահովել որոշման պահանջների կատարումը:

4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի՝ ոլորտը համակարգող տեղակալին:

6/30/2021

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ